# ԺԱՄԱՄԱՏՈՅՑ
# ՅԱՂԱԳՍ
# Սրբոյն ԳՐԻԳՈՐԻ
# ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ

Եղանակաւորի ,

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] ։



[illegible] ։ 1706.
Ի Տպարանի [illegible]
[illegible] ։



ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ.

Լուսաւորիչ.

Երեկոյեան նախատօնակ և ժա-
մերգութիւն ի Լուսաւորչական եկեղե-
ցւոյն Գրիգորի ։ Նախ ասի զՀայր մեր ։ Ողջոյն քեզ Մա-
րիամ ։ և ապա ՚ի ձայն սկսանի
այսպէս ։



Սարկ. Ծ ՅՕԳՆԵԼ ինձ նայեաց ։
Դպիր. Եւ Տէր յօգնել ինձ փութա ։

Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբ. ։ Որպէս էր ՚ի սկզբանէ, և այժմ և միշտ, և ՚ի յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։ Ալէլուիա ։ Անթիփօնայ ։ Խնդամ Մայր Եկեղեցի սուրբ են հանդիսաւորք Հայաստանեայց Հայրապետին և մարտիրոսին սրբոյն Գրիգորի ։

Սաղմոս 109.

Ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ, մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց ։ Գաւազան զօրութեան քո առաքեսցէ Տէր ՚ի Սիոնէ, և տիրեսցես դու ՚ի մէջ թշնամեաց քոց ։ Ընդ քեզ է՝ սկզբնաւորութիւն զօրու-

թեն, 'ի վայելչութիւն սրբոց քոց՝ յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ:

Երդուաւ Տէր և ոչ եւս զղջասցի, թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի, և Տէր ընդ աջմէ քումմէ:

Խորտակեսցէ յաւուր բարկութեան թագաւորս, դատեսցէ զհեթանոսս և բազմամ՝ սատակեսցէ զդիակունս, և խորտակեսցէ զգլուխս բազմաց 'ի երկրի:

Ջուր 'ի ճանապարհի արբցէ, վասն այսորիկ և բարձր արասցէ զգլուխս:

Փառք Հօր, և Որդւոյ, և այլն: Ալէլուիա. Քարոզ առ սաղմոսացն կարգեցելով բարոզեր օրՆ Գրիգոր զՏրն մեր Յսի Քսի:

Սաղմոս 110.

Խոստովան եղէց քեզ Տէր բոլորով սրտիւ իմով՝ 'ի խորհուրդս ուղղոց 'ի ժողովուրդս, մեծ են գործք Տն՝ և քննեալ են յամենայն կամս նորա:

Խոստովանութիւն և վայելչութիւն են գործք նորա, արդարութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից:

Յիշատակ արար սքանչելեաց իւ-րոց, ողորմած՝ և գթած է Տէր.

կե-

կերակուր ետ երկիւղածաց իւրոց:
Յիշեաց յաւիտենից զուխտ իւր,
զզօրութիւն գործոց իւրոց, պատմ_
եաց ժողովրդեան իւրում:
Տալ նոցա զժառանգութիւն հեթա_
նոսաց, և գործք ձեռաց նորա ճշ_
մարտութիւն և իրաւունք են:
Հաւատարիմ են ամենայն պատ_
ուիրանք նորա, հաստատեալք են
յաւիտեանս յաւիտենից, արարեալք
են ճշմարտութեամբ և ուղղութեամբ:
Փրկութիւն առաքեաց Տէր ժողովր_
դեան իւրում, պատուիրեաց յա_
ւիտենից զուխտ իւր՝ սուրբ և
ահեղ է անուն նորա:
Սկիզբն իմաստութեան երկիւղ Տն,
իմաստութիւն բարի ամենեցուն որք
առնեն զնա, և օրհնութիւն նորա
մնայ յաւիտեանս յաւիտենից:
Փառք Հօր, և Որդւոյ:
Աղօթք. Զգուշաւոր հովիւ հո_
գւոցն Քի եղև սբն Գրիգոր, և
լուսաւոր մտաց մերոց:

Սաղմոս 111.

Երանեալ է՝ այր՝ որ երկնչի ի
Տէ, պատուիրանս նորա կա
մի յոյժ:
Հզօր եղիցի յերկրի զաւակ նորա,
և ազգ ուղղոց օրհնեսցի:
Փառք և մեծութիւն է՝ ի տան նո_

րա, արդարութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից:
Ծագեցաւ ՚ի խաւարի լոյս ուղղոց, ողորմած՝ գթած՝ և արդար է Տր:
Քաղցր այր ողորմի՝ և տայ փոխ, յօրինէ զբանս իւր ՚ի դատաստանի, զի յաւիտեան ՚նա մի սասանեսցի:
Յիշատակ յաւիտենից եղիցի արդարն ՚ի համբաւոյ չարէ ՚նա մի երկիցէ:
Պատրաստ է՝ սիրտ ՚նորա յուսալ առ Տն:
Հաստատեալ է՝ սիրտ ՚նորա՝ և ՚նա մի երկիցէ, մինչև տեսցէ ՚ի թշնամիս իւր:
Սփռեաց՝ և ետ աղքատաց, արդարութիւն ՚նորա մնայ յաւիտեանս յաւիտենից, և եղջիւր ՚նորա բարձր եղիցի փառօք:
Մեղաւորն տեսցէ՝ և բարկասցի, զատամունս իւր կրճտեսցէ՝ և հալեսցի, և ցանկութիւն մեղաւորաց կորիցէ:
Փառք Հօր, և Որդւոյ:
Ընթերց. Զատամնայս կռոց անհերեաց, և որոց նահատակաց զՔրիստոսեան Եկեղեցիս հիմնեցաց:

Սաղմոս 112.

Օրհնեցէք մանկունք զՏր, և օրհնեցէք զանուն Տն:

Եղի-

Եղիցի անուն Տն օրհնեալ, յայսմ
հետէ մինչեւ յաւիտեան :
Յարեւելից մինչեւ ի մուտս արեւու,
օրհնեալ է անուն Տն :
Բարձր է ի վերայ ամենայն ազ֊
գաց Տր, եւ յերկինս են փառք նր :
Ո՞վ է որպէս Տր ԱԾ մեր՝ ի բարձ֊
ունս բնակեալ, եւ զխոնարհս տես֊
անէ յերկինս եւ յերկրի :
Յարուցանէ զաղքատն յերկրէ, եւ
բարձր առնէ զտառապեալս յաղ֊
բեաց :
Նստուցանէ զնոսա իշխանս ընդ
իշխանս ժողովրդեան իւրոյ :
Բնակեցուցանէ զամուլն ի տան
ուրախութեան, որպէս մայր որդւոց ըն֊
[illegible] :
Փառք Հօր, եւ Որդւոյ :
Ընթերցի. Ո՛վ Լոյս Հայաստանեայց [illegible]
[illegible]
[illegible] :
Սաղմոս 116.
Օրհնեցէք զՏր ամենայն ազգք,
գովեցէք զնա ամենայն ժողո֊
վուրդք :
Զօրացաւ ողորմութիւն նորա ի վե֊
րայ մեր, եւ ճշմարտութիւն Տեառն
մնայ յաւիտեան :
Փառք Հօր, եւ Որդւոյ :

Գիտութիւն ։

Երանելի է այր, որ համբերէ փորձանաց, զի յորժամ փոր- ձաւորեալ եղիցի՝ առնուցու զպ- սակն կենաց, զոր խոստացաւ Տէ- սիրելեաց իւրոց ։ Այս գոհութիւն ։

Երգ ·

Որ ըստ առաջնում Գրիգորիոս,
ի փայլման զնորոգումն մեծաց մեզ,
ըստ մեծութեան անապակ զոյր,
զլուսաւորեալ լոյսն Հայաստան ։
Դու առաջնորդ ազին Արշակունեաց,
բարձր ես ի մէջ Հայաստանեայց,
զի երկնային ջրհեղ անոյ,
կարկաջեցեր զօրու սանձառնայ ։
Եւ շնորհեցեր ծաղիկ զանդրանիկ,
փայլեցուցեր լուսով զմիտս.
լուսաւորիչ եղեր հրաշից,
զորս փախուցեր բազմաց կամօք ։
Զանազանութ զանեց արարեր,
զոր զերկնայինս արքայակիցներ,
եւ աստուծով զնախազօրն իմաստ
ընդ ժառանգաց երկնից դասու ։
Փառք եղիցի Հօր՝ Աստուծոյ,
եւ միածնի նորին Որդւոյ,
մխիթարչի Հոգւոյն սրբոյ,
այժմ, եւ յանսկիզբն անվախճանին ։

Ամէն ։

տօնել փառօք, եւ պատուով պա- շտեցեր զնա Տէր ։

Որի·

ցին․ Եւ կացուցեր զնա ՚ի վերայ ձեռակերտաց քոց :

## Օրհնութիւն Մարիամու :
### Ղուկա․ ա․ խոր․

Մեծացուսցէ անձն իմ զՏէր : Եւ ցնծացաւ Ոգի իմ ՚յ Աստուած փրկիչ իմ:

Զի հայեցաւ ՚ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ, զի ահա ՚յայսմ հետէ երանեսցեն ինձ ամենայն ազգք:

Զի արար ինձ մեծամեծս որ հզօրն է, և սուրբ անուն նորա :

Եւ ողորմութիւն նորա ՚յ ազգաց ՚ի յազգս երկիւղածաց իւրոց :

Արար զօրութիւն բազկաւ իւրով ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց :

Քակեաց զհզօրս ՚յ աթոռոց, և բարձրացոյց զխոնարհս :

Զքաղցեալս լցոյց բարութեամբ և զմեծատունս արձակեաց ունայնս :

Ընկալաւ զԻսրայէլ զծառայս իւր, յիշել զողորմութիւն իւր :

Որպէս խօսեցաւ առ հարս մեր Աբրահամու՝ և զաւակի նորա ՚ի յաւիտեան :

Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ :

Ո՛վ լոյս Եկեղեցւոյ, ուսուցիչ ճշմարտութեան, հայրապետ Հայոց, ճգնազգեաց սուրբ, քարոզող շնորհաց աղաչեա՛ վասն մեր զորդին ԱԾ Ամենակալս :

Աղօթք :

Տէ՛ր, որ ՚ի ձեռն Երանելւոյն Գրիգորի Հայրապետին, և Նահատակի քո, զմոլորութիւն հայկազեանն ազգի, և զխաւարեալսն ճշմարիտ հաւատոյ զլոյսն ընդունել ընձեռեցեր : այսպէս և եկեղեցւոյ քո ուղղափառաց զայսպիսի յաղթութեան հանդէսն, և առաջի քոյ պարգևանօք, և աղօթիւք նորին օգնեա : ՚Ի ձեռն Տեառն մերոյ ՅՍի ՔՍի Որդւոյ քոյ, որ ընդ քեզ և Հոգւոյն սրբոյ կեայ և թագաւորէ ԱԾ, ՚ի անվերջն յաւիտենս յաւիտենից : Ամէն :

Եւ ապա եղերի յիշատակ սրբոյն Հռիփսիմեանց, և սրբոյն Ռեմիգիոսի Եպիսկոպոսի, և խոստովանողի :

Անթիֆ. Ո՛վ քաջ ուսուցիչ եկեղեցւոյ սրբոյ լոյս երանելի Հռեմիգիոս, Ածային օրինի սիրող աղաչեա՛ վասն մեր զորդին ԱԾ :

աղ.

ասէ. Սիրեսցուք զնա Տր և զպատուա-
րեաց նոցա ։
մխ. Զօրութ փառաց ընկերցդ նմա ։

Աղօթք ։

Տէր, որ եկեղեցւոյ քոյ՝ վն մեծի-
նելոյ զԱծայնութն՝ զերանե-
լի զՀերոնիմոս զհաստատութիւնն քո՝
զանմեռանելի Վարդապետն նախա-
տեսանել, արժանաւոր պարգևեան
առաքելոյ ։ զի նորին մարմնապահն
արգեամբքն, որ բերանով հան-
դերձ և գործով սուրբ, քեւ օգ-
նելով ի Կրտսեանն կարասցուք ։
Ի ձեռն Տն մերոյ Յի Քի ։

Ընթերց. Քահանայ և Հայրապետ,
և գործածող առաքինութեանց, հո-
վիւ բարի ի ժողովրդեան, առ-
ժեան վն մեր առ Տր ։
ասէ. Սիրեսցուք զնա Տր և զպատուա-
րեաց նոցա ։
մխ. Զօրութ փառաց ընկերցդ նմա ։

Աղօթք ։

Տէր ամենակալ անմահական ՍԾ,
զի եղանիլեալն Ժէլմաց
խոստովանողին քոյ և Հայրապե-
տին յուրբեալ հանդեսն, և զուխտն
մեր յանձնեմք, և զփրկութիւն ։ Ի
ձեռն Տեառն մերոյ Յի Քի
քոյ, որ ընդ քեզ և Հոգւոյն սրբոյ

կեայ և թագաւորէ ԱԾ, 'ի յամենայն յաւիտեանս յաւիտենից :

Ամէն :

ող. Տէր ընդ ձեզ :
ժղ. Եւ ընդ Հոգւոյդ քում :
ող. Օրհնեսցուք զՏէր :
ժղ. ԱՅ գոհութիւն :
ող. Եւ Հանապազորդ Հոգիք 'ի ձեռն ողորմութեանն ԱՅ, համբերեսցեն 'ի խաղաղութեան :
ժղ. Ամէն :

Ողջ լեր թագուհի Մայր ողորմութեան, կեանք, քաղցրութիւն, և յոյս մեր ողջ լեր : Առ քեզ աղաղակեմք աքսորեալքս որդիքս Եւայի, առ քեզ հառաչեմք հեծեծելով, և լալով 'ի յայսմ արտասուաց ձորի : Արդ' ուրեմն Միջնորդուհի մեր' զողորմութեան զաչս ողորմած զայս առ մեզ դարձո, և զՅՍ զօրհնեալ զպտուղ որովայնի քո, մեզ' յետ այսմ աքսորութեան' ցոյց : ով գթածուհի, ով քաղցրատուհի, ով քաղցր կոյս Մարիամ :
ող. Աղօթեա վասն մեր սուրբ Ածածին :
ժղ. Զի արժանաւորեսցուք խոստմանցն Քի :

Աղօթք

Աղօթք :

Ամենակարող և մշտնջենաւոր Աստ.
որ փառաւորի մօրն և կուսին
Մարիամու զհոգի և զմարմինն ,
Հոգւոյն սբյ գործակցութեամբ նախա-
պատրաստեցեր , մինչ զի վայելչա-
կան տաղաւար արժանաւորեալ լի-
նել Որդւոյ քում : Տուր մե-
ղաչեմք , զի որոյ նորին յիշատա-
կութեամբ հրճուիմք , նորին եւ
գթածին բարեխօսութեամբ ի չա-
րեաց մեր առ կայեալ , և ի յա-
ւիտենականէ զերծանիցիմք մահու-
անէ : Տէ մերով Յիս. Քրիս :
Ամէն :



Ժամակարգութիւն ի մէջ գիշերի, կամ առաւօտուն, նախ քան զամ Հայր մեր ։ Օրհնեալ թագ. Սրբո֊ յեամ ։ Համառօտ յԱծ ։ և ասա՛ ի ձայն սկսանել այսպէս ։

ասէ. Տէր եթէ զշրթունս իմ բանաս ։

ժողո. Եւ բերան իմ երգեսցէ զօրհնութիւն քո ։

ասէ. Ած յօգնել ինձ նայեաց ։

ժողո. Եւ Տէր յօգնել ինձ փութա ։

ասէ. Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ ։ ժողո. Որդ էր ի սկզբանէ, և այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։ Ալէլուիա ։

Հրաւիրումն Առաւօտեան ժամու ։

Զթագաւորին նախախնամողին զՏէրն Եկայք երկրպագեսցուք ։

Սաղմոս ղդ ։

Եկայք ցնծասցուք ի Տէր, աղա֊ ղակեսցուք առ Ած փրկիչ մեր֊ կոյն

Կանխեսցուք առաջի նորա, խոս_
տովանութեամբ, սաղմոսիւք աղաղա_
կեսցուք առ նա ։
Զթագաւորն նահատակաց զՏէրն
եկայք երկիրպագեսցուք ։
Ած մեծ է, և Տր թագաւոր մեծ
'ի վր ամենայն երկրի ։
'Ի ձեռս նորա են ամենայն ափի_
ւնք երկրի, և բարձրութիւնք լե_
րանց նորա են ։
Եկայք երկիրպագեսցուք ։
Նորա է՛ ծով՝ և նա արար զնա, և
զցամաքս ձեռք նորա ստեղծին ։
Եկայք՝ երկիր պագցուք նմա,
անկցուք՝ և լացցուք առաջի Տն ա_
րարչին մերոյ ։
Նա ինքն է՛ Տր Ած մեր, մեք ժո_
ղովուրդք 'ի ձեռին նորա, և խաշն
արօտի նորա ։
Զթագաւորն նահատակաց զՏէրն
եկայք երկիրպագեսցուք ։
Այսօր եթէ ձայնի նորա լուիցէք
մի խստացուցանէք զսիրտս ձեր
որպէս 'ի դառնութեան ։
Յաւուրն փորձութեան յանապատի,
ուր փորձեցին զիս հարքն ձեր,
քննեցին զիս, և տեսին զգործս իմ ։
Եկայք երկիրպագեսցուք ։
Զքառասուն ամ՝ զզուեցայ ընդ ա_
զգին ընդ այնմիկ, և ասացի, միշտ
մո_

մեղուցեալք են սորաք , և նոքա ոչ ծանեան զձեռնտուութիւն իմ :
Որպէս երգեմք ՚ի բարեխօսութեան խաչիդ, թէ մաղթեն ՚ի հանգիստ իմ:
Զթագաւորն նախահայրական զՏէրն եկայք երկիրպագեսցուք :
Փառք Հօր , և Որդւոյ , և Հոգւոյն սրբոյ , որպէս էր յառաջագոյն և այժմ և միշտ , և յաւիտեանս յաւիտենից: Ամէն :
Եկայք երկիրպագեսցուք :
Զթագաւորն նախահայրական զՏէրն եկայք երկիրպագեսցուք :
Երգ. Լոյս ծագ սրբոյն Գրիգո_րիսի : և այլն զաւանս առաջի ե_րեկորեան ժամու . Է. երեան :
Աւետիք. Փրկեալ եղև ՚ի Փրկչ_տոս , և կատարեալ զատ , մեռօ_րին առաքեալ՝ նմա փառք յաւի_տենականն :

Սաղմոս Ա.

Երանեալ է այր՝ որ ոչ գնաց ՚ի խորհուրդս ամբարշտաց ՚ի ճա_նապարհս մեղաւորաց ոչ եկաց , և յաթոռ ժանտից ոչ նստաւ :
Այլ յօրէնս Տն էն կամք նորա , և յօրէնս նորա խորհեսցի նա ՚ի տուէ և ՚ի գիշերի , և եղիցի նա որպէս ծառ , որ տնկեալ է՝ ՚ի գնացս ջուրց :

Որ զպտուղ իւր ՚ի ժամու տացէ՝
և տերև նորա մի՛ թափեսցի , և
զամենայն զորինչ արասցէ , յաջո_
ղեսցի նմա :
Ո՛չ այսպէս են ամբարիշտք և ո՛չ
այնպէս , այլ որպէս փոշի , զոր
հանէ հողմ ՚ի վերայ երեսաց երկրի :
Վասն այսորիկ ո՛չ յարիցեն ամբա_
րիշտք ՚ի դատաստանի , և ո՛չ մե_
ղաւորք ՚ի խորհուրդս արդարոց :
Քանզի , ճանաչէ Տէր զճանապարհս
արդարոց , ճանապարհք ամբարշ_
տաց կորիցեն :
Ընթերցի . Հրամանի Թագաւորին
ո՛չ հնազանդեցաւ սուրբն Գրիգոր ,
հրամայողի մատուցանել չաստուա_
ծոց զարդարեալ պսակս .

Սաղմոս 2 .

Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք ,
և ժողովուրդք խորհեցան ՚ի
սնոտիս :
Յանդիման եղեն թագաւորք եր_
կրի , և իշխանք ժողովեցան միա_
սին , ՚ի վր Տն , և ՚ի վր օծելոյ նորա :
Խզեսցուք զկապանս նոցա , և ըն_
կեսցուք ՚ի մէնջ զլուծ նոցա :
Բնակեալն ՚յ երկինս ծիծաղեսցի
զնոքօք և Տր արհամարհեսցէ զնո_
սա :
Յայնժամ խօսեսցի ընդ նոսա բար_
կու_

կամօքն իւրով , և սրտմտութեամբ
իւրով խռովեցուսցէ զնոսա :
Եւ ես կացի Թագաւոր ՚ի նմանէ ՚ի
վերայ Սիոնի լերին սրբոյ նորա , ՚ի
պատմել զհրամանս Տեառն :
Տէր ասաց ցիս որդի իմ ես դու , և
ես այսօր ծնայ զքեզ :
Խնդրեա յինէն , և տաց քեզ զհե-
թանոսս ՚ի ժառանգութիւն , և զիշ-
խանութիւն քեզ ընդ ամենայն ծագս
երկրի :
Հովուեսցես զնոսա գաւազանաւ
երկաթեաւ , և որպէս զանօթ բրու-
տի փշրեսցես զնոսա :
Արդ՝ Թագաւորք , զգոյշ ՚ի միտ
առէք , և խրատեցարուք ամենե-
քեան , որ դատէք զերկիր :
Ծառայեցէք Տեառն երկիւղիւ , և ցն-
ծացէք առաջի նորա դողութեամբ :
Ընկալարուք զխրատ նորա , գի մի՛
բարկասցի Տէր , և կորնչիցիք ՚ի ճա-
նապարհաց արդարութեան :
՚Ի ժամանակի , յորժամ բորբոքե-
սցի բարկութիւն նորա :
Երանի ամենեցուն , որք յուսա-
ցեալ են ՚ի Տէր :
Փառք Հօր , և Որդւոյ :
Անթիփ. Քարոզօղն կենդանու-
թե անճառապատմելի փրկագործու-
թեան դշխոյ կրթեալ :

Սաղ

Սաղմոս Գ.

Տէր զի բազմացան նեղիչք իմ,
և բազումք յարեան ՚ի վերայ իմ։
Բազումք ասէին զանձնէ իմմէ,
թէ չիք փրկութիւն սորա առ Աձ
իւր։
Այլ դու Տէր օգնական իմ ես,
փառք իմ, և բարձրացուցիչ գլխոյ
իմոյ։
Ձայնիւ իմով ես առ Տէր կարդա-
ցի, և լուաւ ինձ ՚ի լեռնէ սրբոյ
իւրմէ։
Ես ննջեցի և ՚ի քուն եղէ, զար-
թեայ՝ և Տէր ընդունելի իմ է։
Ոչ երկեայց ես ՚ի բիւրուց զօրաց
ժողովրդեան, որք շուրջանակի պաշարեալ
պատեցին զիս։
Արի Տէր՝ և փրկեա զիս Աձ իմ,
զի դու հարեր զամենեսեան, որք
էին ընդ իս թշնամաբար ՚ի տա-
րապարտուց, և զատամունս մեղա-
ւորաց փշրեցեր։
Տեառն փրկութիւն, ՚ի վերայ ժողովր-
դեան քո օրհնութիւն քո։
Փառք Հօր, և Որդւոյ։
սոր փառք և պատիւ պատշա-
ճի քեզ Տէր։
մինք Էր կացուցեր զնա ՚ի վերայ
ձեռագործաց քոց։ Հայր մեր։

Արձակումն ։

Լուր Տէր Յիսուս Քրիստոս զաղաչանս ծառայից քոց, և ողորմեաց մեզ ։ որ ընդ Հօր և Հոգւոյն սրբոյ կեաս և թագաւորես ՚ի յաւիտեանս յաւիտենից ։ ամէն. Ամէն ։

Օրհնութիւն ։

Միածնեալ որդի՝ օրհնութիւն օրհնեսցուք զմեզ Հօրն յաւիտենականին ։ ամէն. Ամէն ։

Ընթերցուած Գէ Ի.

Եւ ՚ի մեծամեծաց յոյժ յեփեփեալ՝ հոսեալ զերկիրն եկեղեցեացն Եւ իբրև եկեալ նա առ նէ մեծա-ւա, զոր ձեռքն զխաչ՝ յարէ-յատուցանէ՝ յաղթ եկեալ յանուն, որ-պէս ընդ ձեռն զամենայն ծանօթն կին եղէ ։ Ծանուցել Տէր ամենայն խնամարհութիւն՝ և բազում արքա-յութ՝ և փառաւորութեան, որք ընդ-դէմ նոցա կան ՚ի ներկայութեան հրեշից ։ Որպէս ոչինչ զանազանեցի յօդ առ-նապայ չարամահ ձեռք՝ և ոտու-ցանել զձեռ հրապարակաւ և ան-կամի ։ Տուք զմեղքութեան հրեշից և հեթանոսաց զապաշխարութեանն որ ում Աճ, և զհամատարած որ ՚ի Տէր մեր Յիսուս Քրիստոս ։ Եւ արդ ամենա-յին եւ կարգեալ հրաման երգեալ Յերուսաղէմ, և ոչինչ անդ ընդ

իս անոյ անզգամներոյ իցէ՝ չգիտեմ ։
Բայց որ Որդին սուրբ բան քա-
ղաքայ քաղաքայ միոյն լինէ և ա-
ռ , եթէ կապանօք և նեղութիւ-
նօքն ըստ ։ Աղ և ոչ իւիք համա-
րիմ՝ զանձն իմ՝ պատուական՝ որ-
պէս որ կատարեցից զընթացս իմ
ուրախութեամբ՝ և զպաշտօնն զոր
առի ի Տէ Յէ մխոյ լինել աւետա-
րանին շնորհացն ԱՅ ։
Իւ զու Տր ողորմեա մեզ ։
ԱՅ գոհութի ։
Ձկն․ Ես այս մի օրինի Աստու-
ծոյ իւրոյ մարտնեա միտք ի մեծ ,
և ի բանից անիրաւութեան ոչ եր-
կեաւ , * Քանզի հիմնեցեալ էր ի
վերայ հաստատուն վիմի ։
Ւ. Այս է որ արհամարհեաց զեր-
կի աշխարհի , և եհաս առ ՚յ երկ-
նայինն թագաւորութիւն ։ Քանզի
հիմնեցեալ էր ի վր հաստատ վիմի։

Օրհնութի ։

ԱՅ Որդին միածին զմեզ օրհնել
և օգնել ողորմութեամբ ։
Ձկն․ Ամէն ։

Ընթերց․ Բ․

Եւ սորա՝ անհամեմատ գիտեմ են ,
եթէ ոչ ի ամենայն զբերա
իմ զգոյք ամենեքեան , յորս չքնե-
ղաց քաղաքակաւ թագաւորութեան ։ Աղ
որոյ

որոյ զվկայութիւն դնեմ ձեզ յաւ_
ուր յայսմիկ՝ զի սուրբ եմ յարենէ_
ամենեցուն : Քանզի ոչ խորշեցայ
ի պատմելոյ ձեզ զամենայն կամսն
ԱՅ : Զգոյշ կացէք անձանց՝ և
ամենայն հօտին , յորում եդ զձեզ
Հոգին սբ տեսուչս՝ հովուել զեկե_
ղեցին Տն , զոր ապրեցոյց ա_
րեամբն իւրով : Քանզի գիտեմ
ես՝ եթէ յետ ելից իմոց՝ մտ_
ցեն գայլք յափշտակօղք ի ձեզ ,
որք ոչ խնայեսցեն հօտին : Եւ ի
ձէնջ յարիցեն արք , որք խօսիցին
թիւրս՝ ձգել զաշակերտսն զկնի
իւրեանց : Վասն այսորիկ արթուն
կացէք , զի զերեամ՝ մի՝ զցայգ և
զցերեկ ոչ դադարեցի արտասուօք
խրատել զմի մի իւրաքանչիւր :
Եւ զա Տր ողորմեաց մեզ :
ԱՅ գոհութիւն :
ժղխ. Արդարոյն քահանայեալ իբրև_
զԱհարոն , * Եւ ծառայեսցի ի յաւի_
տենական սպասի Տն :
սղ. Տնկեցեալ ի տան Տն ի գաւ_
իթս տան ԱՅ մերոյ : Եւ ծառայես_
ցի ի յաւիտենական սպասի Տն :

Օրհնութիւն :

Որդւոյն սբյ շնորհն քահանայութե_
գործակցութեան և զօրութեան մերում :
ժղխ. Ամէն :

Եւ

Ընթերցք․ Դ․

Եւ արդ յանձնառնեմ զձեզ ԱԾ եւ բանի շնորհաց նորա, որ կարօղ է՛ շինել եւ տալ ձեզ ժառանգութիւն ընդ սրբոց ամենեցուն ։ Ոսկւոյ կամ արծաթոյ՝ կամ հանդերձից՝ ոչ ուրուք ի ձէնջ ցանկացայ ։ Դուք ինքնին գիտէք՝ զի զպէտս իմ, եւ որոց ընդ իս էին՝ սպասաւորեցին ձեռքս այս ։ Եւ զամենայն ինչ ցուցի ձեզ, զի այսպէս պարտ է՛ վաստակել, եւ օգնականել տկարաց, եւ յիշել զբանն ՏեառնՅի, զոր ինքն ասաց՝ երանելի է՛ մանաւանդ տալ քան առնուլ ։ Եւ զայս իբրեւ ասաց՝ եդեալ ծունր ամենեքումբք հանդերձ յաղօթս կացին ։ Բազում լալումն լինէր ամենեցուն, եւ անկեալ զպարանոցաւն Պօղոսի համբուրէին զնա ։ Մանաւանդ ի վերայ բանին զոր ասաց՝ թէ այլ ոչ եւս տեսանելոց էք զերեսս նորա, եւ յուղարկէին զնա ի նաւն ։

Եւ զաւ Տր ողորմեսցի մեզ ։

ԱԾ գոհութի ։

Սղմ․ Ալ Ծնանէր զօրութեամբ, եւ ծնաւ զքեզ մեծամեծս, եւ զօրացոյց զայրս, * Եւ զաւա ի ծագաց մերոց ։

ոսկ․

ազ. Այս է՝ որ արժանաւորեաց զհետն աշխարհի, և եհաս առ յերկնաւորն թագաւորութիւնն, և դատաւ ՚ի հիմն մեզ : Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ : և զմաւ ՚ի հանգիստ մեզ :

՚Ի երկրորդ գիշերաժամուն :

Անթիփ. Կանխեալ կայր ՚ի մերոյ բաղձանս չարչարանաց սրբն Գրիգոր, դամբարանէր զՏէրն կեցուցիչ :

Սաղմոս Հ.

Ի կարդալ իմում լուաւ ինձ Ած իմոյ արդարութե, ՚ի նեղութե իմ ընդարձակ արարեր, ողորմեաց ինձ՝ և լուր աղօթից իմոց : Որդիք մարդկան՝ մինչև ցերբ էք ծանրասիրտք, ընդէ՞ր սիրէք զունայնութի՝ և խնդրէք զսուտ : Ծանիջիք զի սքանչելի արար Տր սրբոյ իւրում, և Տէր լուիցէ ինձ, ՚ի կարդալ իմում առ նա : Բարկանայք և մի՛ մեղանչէք, զոր խօսք ասէք ՚ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարուք : Մատուցէք զպատարագս արդարութե, և յուսացարուք ՚ի Տէր : Բազումք ասեն, թէ ո՞ ցուցցէ մեզ զբարութիւն Տն, նշանակեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ուրախութիւն սրտից մերոց :

՚Ի

'ի պտղոյ ցորենոյ՝ գինւոյ՝ և ձիթոյ
իւրեանց լցուցեր զնոսա։
Խաղաղութեա՛մբ յայս և 'ի նոյն ննջեսցուք և զարթիցուք, զի դու Տէր միայն առանձին յուսով բնակեցուցեր զմեզ։
Փառք Հօր, և Որդւոյ։
Անթիփ. Փառաւորեաց զնա Տէր առաջի թագաւորին, և յայտնեաց նմա զփառս իւր։

Սաղմոս Ե.

Բանից իմոց ունկն դիր Տէր, և 'ի միտ առ զաղաղակ իմ։
Նայեա՛ց 'ի ձայն աղօթից իմոց, թագաւոր իմ և Ա̅ծ իմ։
Զի առ քեզ աղաչեմ Տէր՝ ընդ առաւօտս լուիցես ձայնի իմում, ընդ առաւօտս պատրաստ եղէց, յանդիման լինիլ առ քեզ։
Ո՛չ եթէ դու Ա̅ծ կամիս զանօրէնութիւն, և ո՛չ բնակեսցին առ քեզ չարք, և անօրէնք մի՛ բնակեսցին առաջի աչաց քոց։
Ատեցեր զամենեսին, որք գործեն զանօրէնութիւն, կորուսանես զամենեսեան, որք խօսին զսուտ։
Զայր արիւնահեղ և զնենգաւոր, պիղծ առնես դու Տէր, այլ ես՝ բազում ողորմութեամբ քում, մտից 'ի տուն քո, և երկիրպագից 'ի տաճար

մբ քո երկիւղիւ քո ։

Տր առաջնորդեա ինձ յարդարու-թե քում, վասն թշնամեաց իմոց ուղիղ արա առաջի իմ զճանապար-հս քո ։

Զի ոչ գոյ 'ի բերանս նոցա ճշմար-տութի և սիրտք նց նանրաւք են ։

Որպէս գերեզման բաց է կոկորդ-նոցա, և լեզուօք իւրեանց նենգա-ւորք եղեն ։

Դատեա զնոսա ԱԾ զի անկցին 'ի խորհրդոց իւրեանց, ըստ բազում ամբարշտութե նոցա մերժեա զնո-սա, զի դառնացուցին զքեզ ։

Ուրախ լիցին ամենեքեան՝ որք յուսացեալ են 'ի քեզ, յաւիտեան ցնծասցեն, և բնակեսցես դու 'ի նոսա ։

Պարծեսցին 'ի քեզ սիրելիք անո-ւան քո, զի օրհնեսցես դու զար-դարն, Տր որպէս զինու հաճու-թբ քով պսակեցեր զնոսա ։

Փառք Հօր, և Որդւոյ ։

Անթիֆ. Որպէս արեգակն վերա-փայլող, այնպէս սուրբն Գրիգոր 'ի Տաճարի Տն լուսափայլեաց ։

Սաղմոս Զ.

Տր մի սրտմտութբ քով յանդի-մաներ զիս, և մի բարկութբ քով խրատեր զիս ։

Ողո-

Ողորմեա ինձ Տր̅ զի հիւանդ եմ
ես, բժշկեա զանձն իմ զի խռո-
վեցան ոսկերք իմ։
Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու
Տր̅ մինչև յերբ։
Դարձ Տր̅, և փրկեա զանձն իմ.
կեցո զիս Տր̅, վասն ողորմութեան քում։
Զի ոչ ոք է որ ՚ի մահու յիշէ զքեզ.
կամ ՚ի դժոխս խոստովան առնիցի
առ քեզ։
Վաստակեցայ ես ՚ի հեծութեան
իմում, լուացից զամենայն գիշեր
զմահիճս իմ, և արտասուօք իմովք
զանկողինս իմ թացից։
Խռովեցաւ ՚ի սրտմտութենէ ակն
իմ, և մաշեցայ ես ՚ի վերայ ամե-
նից թշնամեաց իմոց։
Ի բաց կացէք յինէն ամենեքեան, որք
գործէք զանօրէնութիւն։
Լուաւ Տր̅ ձայնի լալոյ իմոյ, լուաւ
Տր̅ աղօթից իմոց, և Տր̅ զխնդրուա-
ծս իմ ընկալաւ։
Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ա-
մենայն թշնամիք իմ, դարձցին
յետս և ամաչեսցեն յոյժ վաղվա-
ղակի և խռովեսցին։
Փառք Հօր, և Որդւոյ։
Առ. Եդեր Տր̅ ՚ի վերայ գլխոյ նր̅։
Տն. Զպսակ ՚ի քարէ պատուականա-
նէ։

Ընթերցուած . Ը.

Երկրորդիս Հայաստանի թագա-ւորական զարմէ ծնեալ, յոր-ժամ բռնակալութեամբ ուղղատանէին Հօրն Անակի առ 'ի սպանութիւն որո-նոյր, անդրեալ գոլով գաղտա-կաւ սպրեցուցեալ, 'ի Կեսարիոյ սնուցեալ եղեւ : Պատանեկան հա-սակին զօրէն քրիստոնէական ընդ նմին եւ զմկրտութիւն ընկա-լաւ : եւ 'ի յօրինաւոր կողակցէ իւր-մէ ծնաւ զերկուս որդիս, Վրթա-նէս, եւ Արիստակէս, զորս այն-չափ առաքել 'ի քէ Հաւատոյ կր-թեալ' զի սրբազանեսցուք ՚ս եր-կարանշիրացն զկեանս առաքելոյն Տրդատ որդի Խոսրովու մեծա-ւոր Հայոց թագաւորի , 'ի Ա-ռաջին զաւառաւանդութեան սպանմե-ցելոց , 'ի Պարսից հալածական յի-նանութեանց կողոպտեցեալ՝ խոյս տուեալ էր 'ի Կեսարիա , որում Գրիգոր , ոչ անգիտանալ զծագու-մն Հօրն՝ եւս զինքն 'ի ծառայութիւն : եւ ընդ նմին 'ի Հայ-աստանի դարձեալ՝ զինի բազմաց ամաց , հաստատեցելոյ նմին 'ի Հաւ-րենեցեալ թագաւորութեան : Ընդ որ 'ի Տրդատայ բազմիցս փորձեցեալ եղեւ , զի զոհել կռոցն կամիցէր :

մին.

մինչ ոչ համանմանեցաւ բաժանումն-
դասուց , զանմիտս զպարզամիտս
կրել բռնադատեցաւ եղև , զի
զբերթէ անհամառօտելին տեսանել-
ցէնն ։
Եւ դու Տէր ողորմեաց մեզ ։
Ա.Յ դոհութի ։
ողբ. Համեստ արար զնա Տէր , և
պահեաց զնա 'ի թշնամեաց , և
'ի մոլորեցուցչաց հոլովանաւորեաց
զնա ։ * Եւ ետ նմա զխանխնա-
կան պայծառութի ։
տող. Եւ էջ ընդ նմա 'ի գուբն ,
և 'ի շղթայսն ոչ եթող զնա ։
Եւ ետ նմա զխանխնականն պայ-
ծառութի ։

## Ընթերց Ե.

Մատն որոյ նախ սատկի 'ի զմնդայս
բանտին ։ 'ի բերանն նորա վասն
արքային , որ մեծագունեղին բռ-
նադատութի 'ի վայրագոյն կռապե-
նէ զմերինադրյնն որոտէր ։ բեռնաւ-
որին ուղին ծանրագոյն բեռամբք
աղխէց որք 'ի հաստատուն են մտ-
րաւանդք ։ առ առանկնք մի Սրբո-
մինն կապեցեաւ 'ի բարձրանա-
զանին քարշի ։ զինի ևօթնից ա-
ւուրց 'ի բարձրանադաշտին 'ի վայր
արքայնի , 'ի մեռանոյ առանձ կանխե-
ցեալ , և հրով մրձեցելով , և բա-

կորիւ 'ի ներքոյ եդելով՝ այնուհետև
ու դասատանիւք խոստովանողա-
ցեալ հայկական ։ որոնքն ընդ առա-
ջնորդօք, և պարոնօք 'ի միա-
բին սկսանին, մինչ զի հասիւր ա-
բիւնն ընդ ծայրից տոհցն, որք
բևեռօք 'ի նոյնսն մխեցելովք խա-
կոյն առիւծին անձնապարել զդնա-
ցուն ։ Գլուխն մամոյլու ձմեռ։ եղե-
գամն 'յԸռնկանեն՝ առ ընդ քաղա-
քի խոստնեալ և նիսթրոս առ Ըղու-
ղն հեղանին ։ քաղաքս շամանդա-
ղն ցեալ նոյն գլուխն ծածկի,
զի հեղձուցանիցի ։ Ըղընկանէք
երկաթեղինօք կողքն կեղեքին ։
և տասնակօք երկաթեղինօք առա-
քաւսեցելովք խոստովանողացն
չարչարի ։ ծունկքն վարտիօք եր-
կաթեղինօք աղուցանին ։ որք
և սեպիւք երկաթեղինօք մե-
լոյնոնին ։ կապար հալեալ 'ի բե-
րանն հեղանի ։ Բայց անյաղթելի
Գրիգորիոսի հոգին՝ Քրիստոսի
հաստատուն և յուսով պարապեալ
ոչ ամենևին խորշեաց 'ի չարչարա-
նաց, և Աճային զօրութեն առա-
ջացեալ՝ համբերողականութեն քարոզեր
զՔրիստոս ։ Սասակ Տրդատ չար-
ժեալ 'ի բարկութեն և վն Հօրն
սպանութեան, զոր յետոյ ծան-

եաւ

եաւ լեալ 'ի յԱնակէ, հրամայէ կապել զպարանոցն զձեռացն և զոտիցն առ 'ի արկանել զնա 'ի խորվիրապն Արտաշատ, զի անդէն մեռանիցի ։

Եւ զոր Տր̃ ողորմեաց մեզ· ԱՅ գոհութիւն ։

ասի· Զցանկութիւն հոգւոյ նորա եհար նմա Տր̃ ։ * Եւ 'ի կամաց շրթանց նորա ոչ զրկեցեր զնա ։ ասէ· Քանզի ժամանեալ արարեր զնա 'ի օրհնութիւն քաղցրութե̃ ։ և եդեր 'ի գլուխ նորա զպսակ 'ի քարէ պատուականէ ։ Եւ 'ի կամաց շրթանց նորա ոչ զրկեցեր զնա ։

Ընթերցուած Գ·

Օ Կնի ամաց չորեքտասանից Ածային նախախնամութե̃ն եղև, զի Տրդատ գրեթէ երկրորդ Նաբուգոդոնոսոր փոխեցեալ, զինքն արկեաց առ ոտսն սրբոյն Գրիգորի, որպէս վերոտին 'ի մեռելոց յառնելոյ, զոր ըստ նախարարացն Թագաւորութե̃ խորհրդեամբք սկսեցեալ, երկար պահօք մաքրեաց, և պատմելով զերկնային ուսմունս վերածնորոգեաց, և օրանչելագործ խնամակալութե̃ զանազանից հիւանդու-

Թէեւ վերահաստատեալ, մի՛ որոյ զփակական խոստովանութիւն ընդդէմ նորա առնել Թագաւորին՝ ինքնին զմեծաւ դիւրին կործանեաց՝ եւ ԱՅ Հինգեցոյց զՆեղեցիս։ զօրավար անդրին, զդամեան եւ զազարար՝ 'ի պատուի ԱՅ բաշխեաց՝ Հայոցն Թագաւորին զԴիրքորոն ընել Նախիջևանոյ, զոր եղիմեանցին առնել յանձն զպաշտօնն՝ Հրեական 'ի յերկինս քաղաքներեաց։ եւ 'ի Լեւոնդեայ Կեսարացւոյ Եպիսկոպոսէ հայրապետ Թագաւորին օծեալ եղեւ։ Մինչ Հայաստան առաջնոյն զառնալով, Հարկն մնացեալ ազատութեան իւրոյ զօրացն Հերգակերտ քաղաքաց 'ի Հինդնեաց, եւ զայլ նոյն վերադարձեալ, նորա որդոյն Յուլիանոս մեծին, եւ Աթանագինէսի Մարտիրոսի զորութ նշխարաց ամփոփեաց, զանեթե քաղաքին Մարդկան մեռեալ, ծածկեալ 'ի վերայ գլխոյ իւրայ չնարոյն հրաշալի խոյն ըստ Ճառաձայնէ, երբեմն զուարճացաւ որոց գրոց։ Պարսից, Ասորոց, Հոնաց, եւ Մարաց զազգս ձանապարհորդեաց առ Վրիստոսեկան Հաւատն, որոց եւ եւ զՆախիջևանոս, եւ զՎահանայր,

և զԿրօնաւորս · և զբազումս ի վա-
նորայս համառօտեալ : Վերջապէս
Անտոնին անդորրութեան և զա-
ռաջմանն անհնազանդիցն գունդ ·
խոնարհեալ Թագաւորին՝ Չարխ-
ակէս որդին իւրն փոխանոր-
դեաց, և ընդ սակաւուք աշխարհեր-
ոք ձմեռաց ՚ի յանդարաւանն : Իւր
ողջ արդարակեա հիմնեալ պահօք՝ ատա-
լով զհերն Անտոնին դիտողութեան
հանգեաւ ՚ի ՏՇՐ լեալ ամսուրբ :
՚ի ժամանակս Կոստանդիանոսի մե-
ծի Կայսերին : Որոյ զօրքագուն
մասունսն՝ Քրիստոնեայք ՚ի Թշ-
նամեաց առեալք ՚ի Հայաստանէ
փախեալք ՚յ Իտալիայ անդրաբե-
րին, և ՚ի Նէապոլի զօրքագուն
գլուխն նորին ընդ շղթայիւքն ·
որովք կապեալ, և զխոտորս գա-
նիցն, որովք ձաղեալ էր, եղին
՚ի Հաշտարանր եկեղեցին ՚ի պա-
տիւ նորին մերձականներան : Իսկ
գլուխն ՚ի յաղթանակս Նեկեղեցին
Ներփառօնեցւոց, որոյ քաղաքացիքն
զնրայս առն սրբոյ բաժնիքս փոյ-
ձանեալք, մանաւանդ ՚ի հոգւոյն
՚յ Աստուծոյ զանձինս, զնոյնն
մեծարող խնդրանց ընդունեալն :
Իւ զու Տէր սրբոցեամ մեզ :
Ամ գոհութիւն :

ղխ. Զպատմուճանն ուրախութե զգեցոյց նմա Տր, * և զպսակ գեղեցկութե եդ ի վերայ գլխոյ նորա: Կերակրեաց զնա Տր հացիւ կենաց, և իմացման, և ջուր կենդանութեան իմաստութեան արբոյց նմա, և զպսակ գեղեցկութե եդ ի վերայ գլխոյ նորա: Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ: Եւ զպսակ գեղեցկութե եդ ի վերայ գլխոյ նորա:

Ի երրորդ գիշերաժամուն:

ԱՆԹԻՓ. Մեծ եղև ի մեծն հայաստան, մեծացուցեալ ի փրկութե ընտրելոցն Աստուծոյ:

Սաղմոս 10.

Ի Տէր յուսացայ որպէս ասիցէք ցանձն իմ, փոխեաց ի լերինս որպէս ճնճղուկ:

Զի ահա մեղաւորք լարեցին զաղեղունս իւրեանց, պատրաստ արարին զնետս ի կապարճս ձգել ընդ խաւար այնոցիկ՝ որք ուղիղք են սրտիւք:

Զի զոր դու չինեցեր՝ նոքա աւերեցին, իսկ արդարն զի՞ արար:

Տր ի տաճարի սուրբ իւրում, Տր յերկինս յաթոռ իւրում:

Աչք նորա ի տնանկս հային՝ ար-

տեա-

արտեւանունք նորա քննեն զորդիս
մարդկան ։
Տէր քննէ զարդարն եւ զամբարիշտն
որ սիրէ զմեղս, ատէ զանձն իւր ։
Տեղասցէ 'ի վերայ մեղաւորաց որո_
գայթ՝ հուր՝ եւ ծծումբ, այս մրրկին
բաժին բաժակի նոցա ։
Արդար է Տէր՝ եւ զարդարութիւն
սիրէ, եւ զուղղութիւն տեսանեն ե_
րեսք նորա ։
Փառք Հօր, եւ Որդւոյ ։
Ընթ. յԱստուածուստ յղեցեալ երկ
'ի առաքինութիւն ազգին, եւ
եբարձ զդարշութիւն ամբարշտուն ։

Սաղմոս 14.

Տէր ով կացցէ 'ի խորանի քում,
կամ ով բնակեսցէ 'ի լերան սր_
բու ։
Որ գնայ յանբիծ՝ գործէ զարդա_
րութիւն, խօսի զճշմարտութիւն 'ի
սրտի իւրում ։
Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւ_
րով, եւ չար ընկերի իւրում ոչ ա_
րար ։
Նախատինս 'ի մերձաւորաց ոչ առ_
նու, արհամարհեալ է՝ առաջի նո_
րա չարագործն ։
Զերկիւղածս Տն փառաւոր առ_
նէ, որ երդնու ընկերի իւրում,
եւ ոչ ստէ ։

Զարծաթ իւր ՚ի վարձու ոչ տայ, եւ կաշառս ՚ի վերայ անմեղաց ոչ առնու, որ զայս արասցէ, նա մի՛ սասանեսցի յաւիտեան:

Փառք Հօր, եւ Որդւոյ:

Ընթերց. Զօրութիւնս բազումս, եւ զհրաշս ՚ի ձեռն երանելւոյն Գրիգորի արար Տէր: Ալէլուիայ:

Սաղմոս 20.

Տէր ՚ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն, ՚ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ:

Զցանկութիւն սրտի նորա ետուր նմա, եւ զկամս շրթանց նորա ոչ արգելեր ՚ի նմանէ:

Ժամանն արարեր զնա յօրհնութիւնս քաղցրութեան քոյ, եւ եդեր ՚ի գլուխ նորա զպսակ ՚ի քարէ պատուականէ:

Կեանս խնդրեաց ՚ի քէն, եւ ետուր նմա ընդ երկայն աւուրս՝ յաւիտեանս յաւիտենից:

Մեծ է՝ փառք նորա ՚ի փրկութեան քում, զփառս եւ զմեծ վայելչութիւն դիցես ՚ի վերայ նորա:

Տացես զնա յօրհնութիւն յաւիտեանս յաւիտենից, եւ ուրախ արասցես զնա յուրախութեան երեսաց քոց:

Թագաւոր յուսացաւ ՚ի Տէր, յողորմութենէ բարձրելոյն նա մի՛ սասանեսցի:

Գտցի

Զօրացի ձեռն քո 'ի վերայ թշնամեաց քոց, և աջ քո գտցէ զամենայն ատելիս քո:

Դիցես զնոսա որպէս հնոց հրոյ, 'ի ժամանակի երեսաց քոց:

Տէր բարկութեամբ խռովեցուսցէ զնոսա, և հուր կերիցէ զնոսա:

Զպտուղ նոցա յերկրէ կորիցէ, և զզաւակ նոցա 'ի որդւոց մարդկանէ:

Խորհեցան 'ի քէն չարութիւն, խորհեցան խորհուրդ, զոր ոչ կարասցեն հաստատել:

Արասցես զնոսա հալածեալս 'ի մնացուածս քո, պատրաստեսցես զերեսս նոցա:

Բարձր լեր Տէր 'ի զօրութեան քում, օրհնեսցուք, և սաղմոս ասասցուք զօրութեան քում:

Փառք Հօր, և Որդւոյ: և այժմ:

Առ. Մեծ է' փառք նորա 'ի փրկութեան քում:

Սղմ. Զփառս, և զմեծ վայելչութիւն դիցես 'ի վերայ նորա:

Ընթերցուած սրբոյ Աւետարանին ըստ Ղուկասու. Գլ. ԺԴ. տուն ԻԶ:

Յայնժամ ասէ Յիսուս ժողովրդեանն: Եթէ որ գայ առ իս, և ոչ ատեայ զհայր իւր, և զմայր, և զկին, և զորդիս, և զեղբարս, և զքորս, նաև զանձն իւր,

իւր, ոչ կարէ իմ՛ աշակերտ լինել, և այլն։

## Ներբողեան սրբոյն Գրիգորի Փաւլինի։

### Ընթերցք Է.

Եթէ զմտաւ ածիցեմք եղբարք ամենասիրելիք, թէ որք՝ և որքանիք են, որք խոստանին մեզ ՚ի յերկինս։ Խոստանք երանին մեզ ամենայնքն, որք են ՚ի յերկինս։ Քանզի Երկրային գոյացութիւնն համեմատեալ երկնայնոյ երջանկութեն՝ ծանրութիւն է, ոչ յաջանդակութիւն, ժամանակաւոր կեանս ՚ի երկնայնոյ կենէ համեմատեալ, մահ ասելի է՝ առաւել քան թէ կեանս։ Քանզի նոյն ինքն հանապազորդ նուաղումն եղծմանն, զի՞նչ է՛ այլ՝ քան թէ այլ ինչ յաճախութիւն մահու։ Բայց ո՞ր լեզուաւ, կամ ո՞ր իմացողութիւն ըմբռնել բաւէ, որքանիք իցեն այնորիկ ուրախութիւնք վերինայնոյ քաղաքին։ Հրեշտակաց պարուցն ներկայանալ ընդ ամենաերանելեաց ոգւոց փառաց արարչին յանդիման կալ՝ ներկայապէս ԱՅ զերեսն նկատել, զանպարագրելի զլոյսն տեսանել, ոչ երբէք ՚ի մահուանէ երկնչել, մշտնջենաւոր և անեղծանելի պարգևաւ ուրախանալ։

Եւ

Եւ դու Տր ողորմեաց մեզ :
Առ գոհութիւն :

Զկո. Պատի ուսեղէն 'ի վր գլխոյ նորա * բացայայտ սրբութեն նշանաւ փառք պատույ, և գործ քաջութեն : ող. Քանզի ժամն արարեր զնա 'ի օրհնութիւն քաղցրութեն, եդեր 'ի գլուխ նորա զպսակ 'ի քարէ պատուականէ : բացայայտ սրբութեն նշանաւ փառք պատույ, և գործ քաջութեն :

Ընթերց. Ը.

Բայց լսելով զայլոտսիկ բորբոքի հոգի, և խնդոյն անդր ցանկայ մերձականիլ, ուր ականէն զերկն անդրաւ յաւիտենից ուրախութեան, բայց առ մեծի պարգևի ժամանիլ ոչ կարէ՝ եթէ ոչ 'ի ձեռն մեծի աշխատանաց, ուստի և Պօղոս քաջ պարտողն ասէ: ոչ պսակեսցի թէ ոչ րստ օրինին մարտիցի : Որպաւանէ ուրեմն զմիտս մեծութիւն պարգևաց, բայց մի՛ զարհուրեցուցէ մարտն աշխատանաց . Ուստի առ յինքն յեկողաց ձրիմարտութին ասէ, թէ որ գայ առ իս, և ոչ ատեայ զհայր իւր և զմայր, և զկին, և զորդիս, և զեղբարս, և զքորս, նաև զանձն ևս իւր, 'ոչ կարէ իմ աշակերտ լինել.

Եւ

Եւ դու Տէր ողորմեա մեզ.
Ամ գոհութի ։

Քհն. Ողորմութեամբ 'ի յերկինս երա–նեցեալ Գրիգորիսի Հայաստանեայց Հայրապետին, փառօք, և պատուով պսակեցելոյ ։ * որ վասն Քրիստո–սի անհնարինն ընդ գանդապանս, և զծա–նունս կրեաց չարչարանս ։

Աղ. Եւս նմա Տէր զգթութի, և մնասցէ 'ի ծերութի յաւիտենից նմա զօրութի ։ Որ վն Քի անհնարինն ընդ գանդապանս, և զծանունս կրեաց չարչարանս ։

Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ. Որ վասն Քի անհնարինն ընդ գան–դապանս, և զծանունս կրեաց չարչարանս ։

Ընթերցք. Ժ.

Բայց ամուսնութեան հանգոյց է, մինչև որ հրամանք(?) առնէլ զծնունդս, և զարդարիւնն մերս, որք պատուի–րին և զթշնամիս սիրել ։ և ըն–ուղին ճշմարտութիւն Քսի կացուց–եալ առնէ, զոր Ած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ ։ և Պօղոս ա–սէ, Արք սիրեցէք զկանայս ձեր, որպէս և Քս սիրեաց զեկեղեցի ։ Ամենակալն աշխարհի զհաղթելիսն սիրել քարոզէ, երբ փորձառութեան ասէ, որ ոչ առնելոյ զմին իւր՝ ոչ

կարէ

կարէ խմ՛ աշակերտ լինել ։ մի՛ թէ գատաւորին այլ ամենայն , և այլ քարոզչին առաքելոյն , կամ՛ թէ ՚ի մշարին և առնել , և սիրել կարեմք ։ Բայց թէ ըստ զօրութի հրամանին զնմանածեմք՝ զերկրաւորն և ս զանապատութի անձնել կարեմք , զի զինն և զայնսմիկ , որք մեզ մարմոյ ազգութի տոհմակիցք են , և զորս ընկերս ձեռնասունս սիրելիք , և զորս մեզ հովանաւորս ՚ի ձեռնասարդի ԱՅ կրեմք՝ առնելով և փախչելով ընձեռնեցայք ։ Եւ գտ Տր ողորմեաց մեզ ։ ԱՅ գոհութի ։

Զ քեզ ԱԾ գովաբանեմք ·
զքեզ հաւանեմք Տր դաւանիմք ։
Զքեզ պաշտէ երկիր համայն ,
հայր անսկզբն և անփոփոխելի ։
Քեզ հրեշտակաց զօրք ամենայն ,
երկինք և պետութիք միանգամայն ։
Հոյլք քրովբէից և սրովբէից ։
երգեն միաձայն լռել ձայնիւք ։
Սբ սբ սբ ես Տր զօրութեան ,
լի են երկինք երկիր փառօք ·
վայելչութե մեծի փառօք ։
Զքեզ փառաւոր դասք ընտրելոց ,
երկրպագեն Առաքելոց ։

Քեւ

Թիւ գովելի Մարգարէից ·
անօրէնութեան նախատանաց :
Երամ՝ պայծառ Մարտիրոսաց ·
գովեն երգով զՏէր փառաց :
Եկեղեցի որ զաւանի ·
Ընդ բոլոր մինչև ՚ի ծագս երկրի :
Ընդ Հայր անբաւ վայելչութեան ·
և զմիածին նոյնոյ բնութեան :
Ընդ որ Հոգին բնութենակից ·
մխիթարիչ քրիստոնէից :
Դու ես Քս փառաց արքայ ·
և միածին Հօր մշտնջենաւոր :
Նա ՚ի փրկել զմարդ հողածին ·
ոչ խորշեցար յարգանդ կուսին :
Դու կոխելով զմահու խայթոց ·
բացեր զերկինս մկրտելոց :
Նստեալդ Հօր ՚ի փառս բազմեալ ·
դատաւոր ես գալոց ապառնեալ :
Մաղթեմք օգնել ծառայից քոց ·
զորս փրկեցեր արեամբ գնով :
Փառաւորեա զմեզ յաւիտենին ·
ընդ սրբոց քոյ ՚յ արքայութեան :
Ընդ ժողովուրդ քո աղաչեմ ·
զժառանգութիւն քո Տէր օրհնեա :
Հովեա զնոսա մինչ յաւիտեան ·
և բարձրացո ՚ի յաւիտեանն :
Ընդ բոլոր օրհնեմք զօրն անդադար ·
զանուն գովեմք մինչ յանսպառ :
Արժանաւոր այսօր Տէրդ գթած ·
պահել զմեզ առանց մեղաց :

Ողոր-

Ողորմեա՛ց մեզ Տէր ողորմեա՛ց.
և հայրախնամ աչօք նայեա՛ց ։
Ողորմութեամբ ընդ մեզ լեցի ։
յոյս մեր 'ի քէն մի՛ վրիպեսցի.
Քեզ ապաստան եմք ապաշէն.
մի՛ ամօթով լիցիմք 'ի քէն ։
Քեզ փառք տացի ձայնիւ երգոց.
'ի յերկնայնոց և յերկրայնոց ։

## Ի ԳՈՎՈՒԹԵԱՆՑ

Սաղ. ԿԹ. Ա̅Ծ յօգնել ինձ նայեա՛ց ։ Եւ Տէր յընկերել ինձ փութա՛ ։

Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն Սրբոյ ։ Որպէս էր 'ի սկզբանն, և այժմ և միշտ, և 'ի յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։ Ալէլուեայ ։ Անթիփոնայ ։ Խնդամ Մայր Եկեղեցի տօնք են հանդիսաւորք Հայաստանեայց Հայրապետի և Մարտիրոսի սրբոյն Գրիգորի ։

Սաղմոս ղբ.

Տէր թագաւորեաց՝ զվայելչութիւն զգեցաւ, զգեցաւ Տէր զզօրութիւն ընդ մէջ իւր էած ։ Հաստատեաց զաշխարհ՝ որ մի՛ սասանեսցի, պատրաստ է՝ աթոռ քո, 'ի սկզբանէ յաւիտեանս դու ես ։

Ամբարձան գետք Տր̅, և ամբարձին գետք զձայնս իւրեանց, յարիցեն գետք ՚ի գնացս իւրեանց։ ՚Ի ձայնէ ջուրց բազմաց սքանչելիք եղեն զբօսանք ծովու։

Սքանչելի ես դու Տր̅ ՚ի բարձունս, վկայութիւնք քո մեզ յոյժ հաւատարիմ։

Տան քում վայելէ սրբութիւն՝ Տէր ընդ երկայն աւուրս։

Փառք Հօր, և Որդւոյ, և այլն։

Անթիփ. Քաջիւ ընդ սպասաւորսն կարգեցելով քարոզեր մեզ Գրիգոր զՏր̅ն մեր Յս̅ Քս̅։

Սաղմոս ղթ.

Աղաղակեցէ՛ք առ Տէր ամենայն երկիր, ծառայեցէք Տն̅ ուրախութբ̅։

Մտէ՛ք առաջի նորա ցնծութեամբ. ծանիջի՛ք՝ զի նա է Տր̅ Ած̅ մեր։ Նա արար զմեզ՝ և ոչ մեք էաք, մեք ժողովուրդք՝ և խաշն արօտի նորա։

Մտէ՛ք ընդ դրունս նորա խոստովանութբ̅, և օրհնութբ̅ ՚ի յարկս նորա։

Խոստովան եղերո՛ւք Տն̅, և օրհնեցէք զանուն նր̅։

Քաղցր է՝ Տր̅, յաւիտեան է ողորմութիւն նորա, յազգէ մինչև յազգ է

Ճշմար֊

Ճշմարտութեան նորա ։
Փառք Հօր, եւ Որդւոյ ։
Ընթերցի. Զգուշանար հսկեա հօ-
տին Քի եղեւ որ Քն Գրիգորիոս,
եւ զօրանար վանող գինոյ ։

Սաղմոս 62.

ԱԾ ԱԾ իմ, ես առ քեզ առաւ-
օտ առնեմ, ծարաւեցաւ առ
քեզ հոգի իմ, քանիպատիկ եւս եւ
մարմին իմ ։
Որպէս երկիր անապատ եւ անջրդի,
ուր ոչ գոյ 'ի նմա ճանապարհ ։
Այսպէս 'ի սրբու երեւեցայց քեզ,
տեսանել ինձ զզօրութիւն քո' եւ
զփառս քո ։
Վս զի լաւ է' ինձ ողորմութիւն քո
քան զկեանս իմ, եւ շրթունք իմ,
գովեսցեն զքեզ ։
Այսպէս օրհնեցից զքեզ 'ի կեանս
իմ, եւ 'յանուն քո համբարձից
զձեռս իմ ։
Որպէս 'ի ճարպոյ պարարտութե-
նէ լցցի անձն իմ, շրթամբք ցնծու-
թեն օրհնեսցէ զքեզ բերան իմ ։
Զի թէ յիշէի զքեզ 'յանկողնի ի-
մում, ընդ առաւօտս կանխէայ
խօսէի ընդ քեզ ։
Զի եղեր իմ օգնական, 'ի հովանի
թեւոց քոց ցնծացայց ։
Եկն զկնի քո անձն իմ, եւ զիս ընկա-
կաւ

կալաւ աջ քո, եւ նոքա ընակիչք խնդրեցին զանձն իմ։

Մտցեն ՚ի ներքոյ անդնդոց երկրի, մատնեսցին ՚ի ձեռս սրոյ, եւ բաժինք աղուեսուց եղիցին։

Թագաւոր յուսացաւ ՚ի Տր, գովեսցին ամենեքեան, որք երդնուն նովաւ, խցցին բերանք այնոցիկ՝ որք խօսին զանիրաւութիւն։

Սաղմոս 66.

ԱԾ ողորմեսցի մեզ, եւ օրհնեսցէ զմեզ, երեւեցո զերեսս քո ՚ի մեզ՝ եւ ողորմեսցի մեզ։

Ճանաչել յերկրի զճանապարհս քո, յազգիս ամենայն զփրկութիւն քո։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ԱԾ, խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ամենայն։

Ուրախ եղիցին՝ եւ ցնծասցեն ազգք, զի դու դատես զժողովուրդս յուղղութեան, եւ զազգս երկրի դու առաջնորդես։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ԱԾ, խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ամենայն։

Երկիր ետ զպտուղ իւր, եւ օրհնեաց զմեզ ԱԾ՝ ԱԾ մեր։

ԱԾ մեր օրհնեսցէ զմեզ, եւ ՚ի նմանէ երկիցեն ամենայն ծագք երկրի։

Նուագ

փառք Հօր, և Որդւոյ :
Ընթերցի. Զաստուածս կռոց անե-
րեւոյց, և որոց նահատակաց զԳե-
րաշնորհ Եկեղեցիս հիմնեցոյց :
Երգ երից մանկանց. Դանիել Ը.

Օրհնեցէք ամենայն գործք Տն զՏէր, գովեցէք և բարձրա-
րէք զնա յաւիտեանս :
Օրհնեցէք հրեշտակք Տն զՏր, օրհնեցէք երկինք զՏր :
Օրհնեցէք ամենայն ջուրք, որք 'ի վերոյ երկնից են զՏր, օրհնե-
ցէք ամ՟ զօրութիւնք Տն՟ զՏր :
Օրհնեցէք արեգակն, և լուսին զՏր, օրհնեցէք աստեղք երկնի զՏր :
Օրհնեցէք ամենայն անձրև և ցօղ զՏր, օրհնեցէք ամենայն ողիք Այ զՏր :
Օրհնեցէք հուր և ջեր զՏր, օր-
հնեցէք ցուրտ և տօթ զՏր :
Օրհնեցէք ցօղք և ձիւնաբեր զՏր, օրհնեցէք սառն, և պաղ զՏր :
Օրհնեցէք եղեամն և ձիւն զՏր, օրհնեցէք տիւք, և գիշերք զՏր :
Օրհնեցէք լոյս և խաւարք զՏր, օրհնեցէք ամպք և փայլատակունք զՏր :
Օրհնեսցէ երկիր զՏր, գովեսցէ և բարձրացուսցէ զնա 'ի յաւիտեանս :

Օր-

Օրհնեցէք լերինք և բլուրք՝ զՏր, օրհնեցէք ամենայն բոյսք 'ի երկրի զՏր։

Օրհնեցէք աղբիւրք զՏր, օրհնեցէք ծովք և գետք զՏր։

Օրհնեցէք կէտք, և ամենայնք որք շարժին 'ի ջուրս զՏր, օրհնեցէք ամենայն թռչունք երկնից զՏր։

Օրհնեցէք ամենայն գազանք՝, և անասունք զՏր, օրհնեցէք որդիք մարդկան զՏր։

Օրհնեսցէ Իսրայէլ զՏր, գովեսցէ և բարձրացուսցէ զնա 'ի յաւիտեանս։

Օրհնեցէ՛ք Քահանայք Տն զՏր, օրհնեցէք ծառայք Տն զՏէր։

Օրհնեցէ՛ք ոգիք, և հոգիք արդարոց զՏր, օրհնեցէք սուրբք և խոնարհք սրտիւք զՏր։

Օրհնեցէ՛ք Անանիա, Ազարիա, Միսայէլ զՏր, գովեցէք և բարձրացուցէք զնա 'ի յաւիտեանս։

Օրհնեսցուք զՀայր և զՈրդի ընդ սբյ Ոգւոյն, գովեսցուք և բարձրացուսցուք զնա 'ի յաւիտեանս։

Օրհնեցեալ ես Տր 'ի հաստատութեան երկնից, գովեալ և փառաւորեալ և առաւել բարձրացեալ 'ի յաւիտեանս։

Որ ոչ ասի փառք Հօր․ և ոչ Ողն․ Ա․

ԸՆԹԵՐՑ. Ո՛վ լոյս Հայաստանեայց, որ մարտիրոսութեամբ պսակիլ, և՛ ի մէջ Հայաստանեայց անուանիլ արժանաւորս արդիւնաւորեցար ։

Սաղմոս 148.

Օրհնեցէք զՏէր 'յերկնից, օրհնեցէք զնա 'ի բարձունս ։
Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա, օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա,
Օրհնեցէք զնա արեգակն և լուսին, օրհնեցէք զնա ամենայն աստեղք, և լոյս ։
Օրհնեցէք զնա երկինք երկնից, և ջուրք՝ որք 'ի վերոյ քան զերկինս օրհնեսցեն զանուն Տն ։
Զի նա ասաց՝ և եղեն, հրամայեաց՝ և հաստատեցան ։
Կացոյց զնոսա յաւիտեան յաւիտենից, հրաման ետ և ոչ անցցէ ։
Օրհնեցէք զՏէր 'յերկրէ վիշապք և ամենայն խորք ։
Հուր և կարկուտ, ձիւն և սառն, հողմ մրրկի՝, որք առնեն զբանս նորա ։
Լերինք և ամենայն բլուրք, ծառք պտղաբերք՝ և ամենայն մայրք ։
Գազանք՝ և ամենայն անասունք, սողունք և ամենայն թռչունք թեւաւորք ։

Թագաւորք երկրի՝ և զօրք իւրեանց, իշխանք՝ և ամենայն դատաւորք երկրի :
Երիտասարդք՝ և կուսանք՝ ծերք՝ և տղայք օրհնեսցեն զանուն Տն :
Բարձրացաւ անուն նորա միայն, խոստովանութիւն նմա յերկինս և յերկրի :
Բարձր առնէ Տր եղջիւր ժողովրդեան իւրոյ, օրհնութիւն յամենայն սբց նորա, յորդւոցն Իսրայէլի, ժողովրդեան, որ մերձ է՛ առ Տէր :
Սա ոչ ասի Փառք :
Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր, օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց :
Ուրախասցի Իսրայէլ յարարիչ իւր՝ որդիք սիոնի ցնծասցեն ՚ի թագաւորին իւրեանց :
Օրհնեսցեն զանուն նորա օրհնութբ, սաղմոսիւք՝ և օրհնութեամբ սաղմոս ասասցեն նմա :
Հաճի Տէր ընդ ժողովուրդս իւր, բարձր արասցէ զհեզս ՚ի փրկութե :
Պարծեսցին սուրբք փառօք և ցնծասցեն ՚ի հանգիստս իւրեանց, և բարձր արասցեն զԱստուած բերանօք իւրեանց :

Սուսերք երկսայրիք են ի ձեռս նո-
ցա . առնուլ զհատուցումն ի հե-
թանոսաց յանդիմանութիւն ամենայն
ժողովրդոց ։
Կապել զթագաւորս նոցա կա-
պանօք , զփառաւորս նոցա ձեռնա-
կապաւ երկաթեաւ ։
Առնել ի նոսա զդատաստանս գր-
եալ , փառք այս են յամենայն
սրբոց նր ։
Հատ ու ստի փառք ։

Սաղմոս 150 .

Օրհնեցէք զՏր ի սրբութեան
նորա , օրհնեցէք զնա ի հաս-
տատութեն զօրութեն նորա ։
Օրհնեցէք զնա ի զօրութեն նորա ,
օրհնեցէք զնա ի բազում մեծու-
թեն նորա ։
Օրհնեցէք զնա ի ձայն օրհնութեն ,
օրհնեցէք զնա սաղմոսիւք և օրհ-
նութեամբ ։
Օրհնեցէք զնա ցնծութբ , գովե-
ցէք զնա ուրախութբ ։
Օրհնեցէք զնա ի բանս քաղցունս ,
օրհնեցէք զնա ի բարբառ լեզուի ։
Օրհնեցէք զնա ի ձայն գոհութեն
ամենայն հոգիք օրհնեցէք զՏր ։
Փառք Հօր , և Որդւոյ ։

Գլխատութիւն,

Երանեալ է այր, որ համբերէ փորձանաց, զի յորժամ փորձեցեալ եղիցի՝ առնուցու զպսակն կենաց, զոր խոստացաւ Այ սիրելեաց իւրոց։ Այս գոհութիւն,

Երգ.

Այս ով պայծառ Դրիգորիոս,
փայլեալ զծագումն մտաց մերոց,
քեւ մխիթարիլ ուսուցաք զքեզ,
զմշտանձեն լոյսն Քրիստոս։
Դու պայծառ ակն Լուսաւորչաց,
բարձր ես ՚ի մէջ Սարոփիմաց,
զի ՚յ երկրաւորաց շնչիլ առնաց,
կրեցեր զշուրս ստեղծանոց։
Բժշկեցեր ձայնիւ զմարմինս,
փայլեցուցեր լուսով զմիտս,
լուսաւորիչ եղեր հրաշիւք,
զդեւս փախուցեր քոյին կամօք։
Զանգատորք զանց արարեր,
դու զերկնային պարգեւաբերեցեր,
եւ առեալ զաշխարհն՝ խնդաս
ընդ ժառանգաց երկնիցն դասու։
Փառք եղիցի Հօր՝ Աստուծոյ,
եւ միածնի նորին Որդւոյ,
մխիթարչի Հոգւոյն սրբոյ,
այժմ, եւ յաւիտեանս ամենայն։
Ամէն։

տերին. Արդարն ոչ արժանէնի Յաղեւեցի։

ալլ.

ղխ. Ո՛վ ծառնին ընծայեցաւ բաղ-
ձայցի.

Անթիփոնա.

Ո՛վ բարձր հոգի Գրիգորիոս լոյս հա-
յաստանեայց, որ զճառագայթեալն
լուսով զԹագաւորին փառաց ընդ-
դրեցուցանողս սրբոց աւանք, ըն-
կալ զուխտ պաշտօնէից, որք
զդաւանութիւն քո յաւուր երգեն:

Աւետարան.

Օրհնութիւն Զաքարիայ Հօրն
Յովհաննու. Ղուկ. 1.

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, որ
այցել, և արար զփրկութիւն
ժողովրդեան իւրոյ:
Յարոյց մեզ եղջեւր փրկութեան ՚ի
տանէ Դաւթի ծառայի իւրոյ որ-
պէս խօսեցաւ բերանով սրբոց, որք
յաւիտենից մարգարէքն էին:
Փրկութիւն ՚ի թշնամեաց մերոց, և ՚ի
ձեռաց ամենայն ատելեաց մերոց:
Առնել ողորմութիւն ընդ հարս մեր,
և յիշել զկտակարանս սրբութեան
իւրոյ:
Զերդումն, զոր երդուաւ Աբրա-
համու հօր մերոյ տալ մեզ, առանց
երկիւղի զփրկութիւն ՚ի թշնամեաց
մերոց:
Պաշտել զնա սրբութեամբ և արդա-
րութեամբ առաջի նորա, զամենայն

աւուրս կենաց մերոց ։
Եւ դու մանուկ մարգարէ բար_ձրելոյն կոչեսցիս , զի երթիցես առաջի Տն , պատրաստել զճանապարհս նր ։
Տալ զգիտութիւն փրկութեան ժողովր_դեան նորա , 'ի թողութիւն նոց մե_ղաց մերոց ։
Վ"ն գթոյ ողորմութեան Տն Այ մերոյ , որով երեւեցաւ մեզ արե_գակն 'ի բարձանց , լուսաւոր առ_նել զխաւարս մեր ։
Ծագել լոյս 'ի մերայ ազատչին որը_նստեալք 'ի խաւարի , եւ 'ի ստուերս մահու , ուղղել զոտս մեր 'ի ճանա_պարհս խաղաղութեան ։
Փառք Հօր , եւ Որդւոյ , եւ Հոգւոյն սբյ ։

Աղօթք ։

Տ՟ , որ 'ի ձեռն Երանելւոյն Գրիգորիսի Հայաստանեայցս , Լուսաւորչի քոյ , զծագումն լուսոյն հայկականին ազգիս , եւ զթագաւորին Տրդատայ հաւատոյ զոր յոյն ընդու_նել ընձեռեցեր ։ այսպիսի եւ եւ_գեցեալ քոյ ուրախութեան զայդպես յաղթութեան հանդերձ , եւ առաջի քոյ արդարեանք , եւ արքայութեան նո_րին շնորհեա ։ 'ի ձեռն Տեառն մե_րոյ ՅՍի ՔՍի Որդւոյ քոյ , որ ընդ քեզ եւ Հոգւոյն սրբոյ կեայ եւ թա_

գաւ_

զաւակացն ԱՅ, ՚ի ամենայն յաւիտե_
նից յաւիտենիցս ։ Ամէն ։
Եւ այլ քահանայքն զաղօթս ՚ի ա_
ռաջին երեկոյեան ժամուն ։

---

Իսկ ՚ի կիրակէ պասուց երեկոյեան ժա_
մուն, որպէս առաջինն ։
սաղ. Առաքեալն առ ապաշաւանս ծառ_
կեայն ․
սղմ. Որ ծառին զիտնանաց քաղ_
ցրայն ․
Մեծացու ։ Անթիփոնա ․
Որ կար Գրիգոր Սեպանդրոս Քրի_
ստոս ՚ի մէջ մեր, որ մաքրեա_
ցաք քոյին օրհնեցեալ յաւիտենա_
կանաց խնդրութեան ժամանել առ_
աքինաւորեցին ․ Անկեալ իմ ․
Մեծացուսցէ ։ եւ այլն առ ՚ի մերոյ ։





Յիշատակ սրբոյ

# ՀՕՐՆ ՏՕՄԻՆԻԿՈՍԻ

Այս այր արհամարհելով զաշխարհ եւ զերկրայինսն , յաղթութեամբ , զմե-ծութիւն 'ի երկինս հաստատեաց բե-րանով , ձեռամբ :

Տող. Զարդարն էած Տր ընդ ճա-նապարհս ուղիղս.

Պատ. Եւ եցոյց նմա զթագաւորու-թիւն Այ :

Աղօթք :

Ած , որ զեկեղեցի քո , երանե-լւոյն Տօմինիկոսի խոստովանողի քո , արդեամբք եւ վարդապետու-թեամբն լուսաւորել արժանացար , պարգեւեա , զի նորին Բարեխօ-սութեամբն , ժամանակաւորօք մի՛ զր-կեսցի օգնականութեամբ , եւ հոգեւորօք միշտ օգտեսցի առատութեամբ : 'ի ձեռն Տն մերոյ Յի Քի , որդւոյ քո , որ ընդ քեզ կեայ եւ թագաւորէ 'ի միութեան նորին Հոգւոյն սրբոյ , 'ի յաւիտե-նայն յաւիտեանս յաւիտենից .

Ամէն :

## Յիշատակարան ։

Ողորմութեամբ բարերարին ԱՅ․ արդեամբք, և ձեռնտուութեամբ բարեպաշտօնի Աւան խաչատրեանցն Խոջա Աղաբեկեանի որդի Պարոն Գալստեանին տնտեսութեան գրեցաւ այս, որ կոչի Ժամագիրք Սրբուհւոյ Կաթողիկէ Մայրաքաղաքին Էջմիածնի, Նորոգեալ նմանութեամբ հին գրչաց, նա և կարգաւ սրբոյն։ Նաև է կոնդակն Երուսաղէմի Փիլիպպոսի տպարանի։ այս ամենայնն ի միասին անուանի։ Երրորդ անգամն է՝ Կարգաւորութիւն քրիստոնէական, որոյ է, կարգաւոր քրիստոնէական վարդապետութիւն։ Հետևեն դաշնադրեն Էջմիածնի ընդ ամենայն Հռովմայ Ժամանակին, և Լիբանանայն։ Այս Եօթն Սաղմոսն ապաշխարութեան, ընդ Լիթանիայն Սրբոց, և այլ որ։ Զին այսպէս ժամերգութիւն Նախճերկոյ։ Հետևեն Հայրապետաց Տէ մերոյ բան շարականաց Աւետարանչացն որոց, Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու, և Յովհաննու։ Այս դաւանութիւն սրբոյն Աթանասի, և Անանիայ Ռոստոմին։ Հետևեն

Երգք

երբ երևելիք ընդ սորին ։ այս
Միածնութիւն չարչարանացն Քի ։
խաչաւ և աղօթք ջերմեռանդու_
թեն խոստովանութիւն և հաղորդու_
թիւն, ընդ տառանցն մէջն Թիօ_
մոյի ։ խնդրոյն հեռանէին նշանակու_
թեանք բազմաւոր և արարողութեանց
մէջ Պատարագին ։ և ուրոյն ուրոյն
աղօթք բառ խորհրդոյն ։ այս տառ_
նարն երրորդութեան ։ մերձավորեալ է
ժամ մէջն Գրիգորի մերոյ լուսա_
ւորչին, յիշատակ մէջն Տօնինեանց,
և յիշատակարանս է՝ այս ։

Որդ. Ծանուցումն լինի Աստուծոյ
ամենեցունն՝ բարերարութեանց Քնա_
ւանեաց կենդանարար գծանցորդ_
ակա գոյս, զի ամենայնիւ հաղոր_
դակցութեան և աշխատանաց ջերմե_
ռանդութեան նախնեաց մերոյ ընթե_
ցողն սորա ։ Քանզի ՚ի սնա
զմանին նուէրք որ եղեն առիթք
և պատճառք կեցութեան հոգւոց,
մանաւանդ թէ սորա խնդիրք ու_
ւանորդութեանց Ամենակին, որոց
բարերարիս միջնորդութեան գիւ_
տակես ընդունելիք զղջման_
ման ՚ի ՌՃ գ չորրհան ։ Սովա_
ծնեալք հոգոց նմջեցելոց՝ որք նոյ_
նով հրով գծովեալ ամենքին
խոստովանողաց մն չարութե
մեղաց

մեղաց խաբէութեան բանս չարիս. Հա-
ռաչելոց 'ի մարդասպանէն : Սոյնպէս
զղջացելոցս մեզ 'ի խոստովանութեան հաղորդ-
գաղթականաց մեծարելք զրադարհա-
ւանս : Սոյնպէս խորհրդիք գրասենեա-
կալիցս չարչարեալ Տէր մերոյ :
Սոյնպէս ողորմեսցէ հոգւոցն անձանց իւր-
եանց 'ի ժամ՝ գալստեան Պատարագողացն :
և երգօքն ալէլուիա՝ ուրախանալով
ընդ մեզ . որ աղօթականն սոսկալ
Լոյսին : Վերջացեալ սոյնս աղօթ-
մատեանս ժամերգութեան գիրք Լուսաւո-
րիչն մեր , և են գիրքն ամենայն
յարմար սրբատառութեան մեծարելոյ
գիր ընթերցողաց նոցին , և զաղօ-
թսն : Վասն որոյ աղաչեմք բազ-
մաց ողորմի գամենայնքն զմիայն
նորին Սրբոյն Հոգւոյն անձանց
բանիւք սրբոյք , որ աղօթեցէք և
բարեխօսութեամբ նորին՝ արժանա-
ցուսցէ զմեզ Քրիստոս Տէր և մեր խորագ
ողջ ընդ յիշատակս , որովք մաքրութեամբ
այլ ամենայն գային ամենայն տեառն՝ որ
հաճեցի նորին , առաջ կարդացաք
ամենայն Տէր ողորմեսցի նոցին
զմիայն երանութիւն արքայութեան
նոցին 'ի կենսն երջանկի : Ամէն :

ՎԵՐՋ :